

U 23.00.02
C-38

Հ. ՊՆ Դ. ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐԵՆ ԿԱՌՈՒՆԻ ՇԱՔԱՐՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՐՊՍՓՈՆՈՒՄԸ 1980-90-ԱՎԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԻԳ. 00.02- «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»
մասնագիտությամբ
քաղաքական գիտությունների բեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2012

U 23.00.02
C-38

Հ. ՊՆ Դ. ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՈԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐԵՆ ԿԱՌԱՆԻ ԸՆԲԱՐՅԱՆ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՈՒՄԱԿՑԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԵՐՊՍՓՈՆՈՒՄԸ 1980-90-ԱՎԱՆ
ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ԻԳ. 00.02- «Քաղաքական ինստիտուտներ և գործընթացներ»

մասնագիտությամբ

քաղաքական գիտությունների բեկնածուի

գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Պետական Համալսարանում:

Գիտական դեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր Գ.Մ. Քեռյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր Ա.Գ. Ավագյան
պատմական գիտությունների թեկնածու Վ.Հ. Տեր-Մաթևոսյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2012թ. հունիսի 29-ին, ժամը 14.00-ին, ՀՀ ՊՆ ԱՌՀ-ում գործող ՀՀ ԲՈՀ-ի 056 մասնագիտական խորհրդի նիստում:


Մասնագիտական խորհրդի հասցեն՝ ՀՀ 0037 Երևան, Ուլնեցու փողոց 56/6:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ՊՆ ԱՌՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012թ. մայիսի 26-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար

Պատմական գիտությունների դոկտոր՝  Պ.Ա. Չոբանյան



3414-2012

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: 1980-90-ական թվականների Թուրքիայի կուսակցական համակարգի համալիր ուսումնասիրությունն ունի կարևոր գիտական և կիրառական նշանակություն: Թեմայի համակողմանի հետազոտումը խիստ արդիական է ոչ միայն Թուրքիայի այդ շրջանի պատմության ուսումնասիրման, այլ նաև ժամանակակից Թուրքիայում տեղի ունեցող քաղաքական գործընթացների տրամաբանությունն ավելի խորը հասկանալու և գնահատելու համար:

Թուրքիայում բազմակուսակցական համակարգը հաստատվել է 1946թ. և ունեցել է զարգացման իր առանձնահատկությունները: Դրանք էին՝ աջ կենտրոնամետ կուսակցությունների գերակայությունը համակարգում, բևեռացման մակարդակի պարբերական աճը, քաղաքական կուսակցությունների հաճախակի արգելումները և բանակի միջամտությունները քաղաքական համակարգ: 1980թ. բանակի հերթական ռազմական միջամտությունը լուրջ ազդեցություն ունեցավ կուսակցական համակարգի զարգացման վրա: Բոլոր կուսակցությունների արգելումից և հեղաշրջմանը նախորդող շրջանի բազմաթիվ քաղաքական գործիչների նկատմամբ քաղաքականությամբ զբաղվելու արգելքներ դնելուց հետո բանակի անմիջական մասնակցությամբ և հսկողությամբ սկսվեցին դրվել կուսակցական նոր համակարգի հիմքերը:

1980-90-ական թվականների կուսակցական համակարգի ուսումնասիրությունն արդիական է նաև նրանով, որ հենց այս շրջանում ընդունվեցին նոր սահմանադրությունը, «Քաղաքական կուսակցությունների մասին» և ընտրական օրենքները: Չնայած այն բանին, որ մինչ օրս դրանցում կատարվել են մեծ թվով փոփոխություններ, այնուամենայնիվ, դրանք շարունակում են լուրջ ազդեցություն ունենալ կուսակցական համակարգի գործառնության վրա: Մասնավորապես սահմանադրությամբ և «Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքով կուսակցությունների համար սահմանված արգելքները և ընտրական օրենքով ներմուծված խորհրդարանական ընտրությունների ընթացքում գործող երկրի մասշտաբով 10 տոկոսանոց ընտրաչեմն ունեցել և շարունակում են էական ազդեցություն ունենալ կուսակցական համակարգի դերակատարների ճակատագրի վրա:

Սույն թեմայի ուսումնասիրությունը կարևոր է և հնարավորություն է տալիս ավելի հստակ պատկերացնել մեր հարևան հանրապետության ներկայումս գործող կուսակցական համակարգի արմատները և մեխանիզմները, խորությամբ հասկանալու տեղի ունեցող զարգացումների պատճառները և տրամաբանությունը:

Հետազոտության նպատակներն ու խնդիրները: Ատենախոսության նպատակն է ներկայացնել 1980թ. ռազմական հեղաշրջման և դրանից հետո զինվորականների ձեռնարկած քայլերի ազդեցությունը կուսակցական համակարգի վրա, համալիր ուսումնասիրության ենթարկել 1980-90-ական թվականների Թուրքիայի կուսակցական համակարգի կերպափոխման գործընթացը, ցույց տալ այդ գործընթացի վրա ազդող գործոնները և դրա հետևանքները: Հեղինակն այս ամենին ձգտել է հասնել հետևյալ խնդիրների առաջադրմամբ՝

- Ընդհանուր գծերով ուսումնասիրել 1980թ. հեղաշրջմանը նախորդած շրջանի կուսակցական համակարգը ցույց տալու համար հեղաշրջումից հետո զինվորականության ձեռնարկած քայլերի տրամաբանությունը:
- Ուսումնասիրել հեղաշրջումից հետո «անցումային շրջանում» զինվորական իշխանությունների քաղաքականությունը՝ բացահայտելով դրա հիմնական ուղղվածությունն ու նպատակները:
- Դիտարկել զինվորական իշխանությունների անմիջական վերահսկողությամբ ընդունված 1982թ. սահմանադրությունը, «Քաղաքական կուսակցությունների մասին» օրենքը և ընտրական օրենքը, քննարկել դրանց հիմնական առանձնահատկությունները:
- Սկզբնաղբյուրների և այլ նյութերի հիման վրա վերլուծել նորաստեղծ կուսակցությունների ծրագրային դրույթները, քննարկել 1983թ. խորհրդարանական ընտրությունները և դրանց արդյունքները:
- Ներկայացնել 1983-1991թթ. ընթացքում Թուրքիայի կուսակցական համակարգում տեղի ունեցող գործընթացները:
- Լուսաբանել 1991-2002թթ. Թուրքիայում աջ կենտրոնամետ կուսակցությունների անկման պատճառները:
- Ներկայացնել 1983-2002թթ. Թուրքիայի կուսակցական համակարգի կերպափոխման գործընթացը, դրա առանձնահատկությունները և քաղաքական հետևանքները:

Ատենախոսության գիտական նորույթը և պաշտպանության ներկայացվող դրույթները: Ատենախոսության թեման դեռևս չի արժանացել համալիր ուսումնասիրման քաղաքագիտության կամ թուրքագիտության մեջ:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ այն իր բովանդակությամբ ու հարցադրումներով առաջինն է, որտեղ փորձ է արվել ուսումնասիրել 1980-90-ական թվականներին Թուրքիայի կուսակցական համակարգի կերպափոխման գործընթացը, ներկայացնել դրա պատճառները և առանձնահատկությունները՝ օգտագործելով մասնավորապես վերջին շրջանում գիտական շրջանառության դրված թուրքական, եվրոպական, ամերիկյան աղբյուրներ և նյութեր:

Ատենախոսության գիտական արդյունքների և գիտական նորույթի մեջ կարելի է հիշատակել հետևյալը.

- ատենախոսության մեջ ցույց է տրվել, որ 1980թ. նախորդող շրջանում քաղաքական ճգնաժամը և բևեռացման բարձր մակարդակը տեղ են գտել 1980թ. ռազմական հեղաշրջման պատճառների շարքում,
- նորովի են ներկայացված 1980թ. ռազմական հեղաշրջումից հետո զինվորականության կողմից ձեռնարկած օրենսդրական լուրջ փոփոխությունների նպատակները և հետագայում դրանց ազդեցությունը կուսակցական համակարգի զարգացումների վրա,
- օգտագործելով տարբեր հեղինակների մոտեցումներն ու դիրքորոշումները՝ տրվել է 1983թ. խորհրդարանական ընտրությունների նախընտրական զարգացումների և ընտրությունների դերի ու արդյունքների սեփական գնահատականը,
- ատենախոսության մեջ առաջ է քաշվել այն դրույթը, որ 1987թ. խորհրդարանական ընտրություններում «Մայր Հայրենիք» կուսակցության հաղթանակի հիմնական գործոններից են եղել ընտրությունների վաղաժամ անցկացումը և ընտրական օրենքում կատարված փոփոխությունները, որոնք լուրջ առավելություններ են ապահովել մեծամասնության կուսակցության համար,
- ուսումնասիրվել և ներկայացվել է ատենախոսության մեջ նշված ժամանակագրական շրջանակներում Թուրքիայում առկա ընտրակարգի, ընտրական օրենքների և, մասնավորապես, խորհրդարանական

ընտրությունների ժամանակ գործող երկրի մասշտաբով 10 տոկոսանոց ընտրաչեմի ազդեցությունը քաղաքական գործընթացների վրա,

- բազմակողմանիորեն ուսումնասիրվել և բացահայտվել են 1990-ականներին թուրքիայի կուսակցական համակարգում աջ կենտրոնամետ կուսակցությունների անկման և ծայրահեղ աջ կուսակցությունների գրանցած ընտրական հաջողությունների պատճառները,
- ներկայացվել և ասպացուցվել է այն դրույթը, որ 1990-ական թվականներին բազմաթիվ կուսակցությունների արգելումը Սահմանադրական դատարանի կողմից և բանակի միջամտությունը ներքաղաքական զարգացումներին փոփոխել են կուսակցական համակարգի բնականոն զարգացումը,
- ատենախոսության մեջ առաջ է քաշվել այն դրույթը, որ խորհրդարանական ընտրությունների ժամանակ գործող 10 տոկոսանոց ընտրաչեմի հիմնական հետևանքը ընտրության ու ներակայացուցչության վրա հիմնված ժողովրդավարական համակարգին հակադրվող իրավիճակ առաջացնելն է: Այն խախտում է ներկայացուցչության արդարության սկզբունքը և խարխուլում է քաղաքական մասնակցության գլխավոր ուղին հանդիսացող ընտրությունների ժողովրդավարական բնույթը:
- ատենախոսության մեջ ցույց է տրվել, որ հակահամակարգային միտումներ ունեցող բավական ազդեցիկ կուսակցությունների ի հայտ գալը և կուսակցական համակարգի դինամիկայի փոփոխումը կենտրոնամետից կենտրոնախույս թուրքիայի կուսակցական համակարգը տարան չափավոր պլուրալիզմից դեպի բենեացված պլուրալիզմ և 1990-ականների երկրորդ կեսին վերջինս հիմնականում համընկնում էր բենեացված պլուրալիզմի բոլոր հատկանիշներին:

Հետազոտության թեմայի գիտական մշակվածության աստիճանը:
Աշխատությունը գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն և թուրքերեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հիման վրա: Ուսումնասիրությանը զգալիորեն նպաստել են հայ և օտարազգի հետազոտողների՝ քննարկվող թեմային նվիրված արժեքավոր աշխատություններն ու հոդվածները:

Ատենախոսության աղբյուրագիտական հենք են ծառայել թուրքիայում հրապարակված նյութերը, որոնք վերաբերում են ռազմական հեղաշրջումից հետո զինվորականության ձեռնարկած քայլերին, 1983թ. հաջորդած շրջանում

հիմնադրված կուսակցությունների ծրագրերին: Առանձնահատուկ կարևորություն են ներկայացնում Ազգային Անվտանգության Կոմիտեի (*Milli Güvenlik Konseyi*) պաշտոնական հայտարարությունները¹, որոշումները², օրենքները³, Խորհրդատու ժողովի Սահմանադրական հանձնաժողովի զեկույցը⁴, քաղաքական կուսակցությունների ծրագրային դրույթները ներկայացնող աղբյուրները⁵, թուրքական «Միլլիեթի» արխիվը⁶ և այլն:

Թեմայի ուսումնասիրման համար կարևոր աղբյուր են հանդիսացել թուրք հայտնի լրագրող Ուլուր Մումջուլի հոդվածների հավաքածուները, որոնք ներակայացված են մի քանի գրքով⁷: Իր հոդվածներում Մումջուն անդրադարձել է ներքին և արտաքին քաղաքական զարգացումներին, տվել դրանց վերլուծությունը, ինչպես նաև անձամբ մասնակից եղել լուսաբանվող իրադարձությունների մի մասին:

Հետազոտության համար օգտակար է եղել նաև թուրք այլ լրագրողներ Մեհմեթ Ալի Բիրանդի և Սոներ Յալչընի հեղինակած “The Özal. Bir Davanın Öyküsü” գիրքը⁸, որտեղ ներկայացված են 1980-ական թվականների թուրքիայի քաղաքական կյանքի կենտրոնական դեմքերից մեկը հանդիսացող «Մայր Հայրենիք» կուսակցության հիմնադիր և առաջնորդ թուրքոֆ Օզալի կենսագրությունը և քաղաքական գործունեությանը վերաբերող բազմաթիվ փաստեր: Այս փաստերը լուսաբանում են Օզալի մերձավորները և նրան ժամանակակից քաղաքական գործիչները:

Ատենախոսության մեջ քննարկվող տարբեր հարցերի լուսաբանման, ինչպես նաև թուրքիայի ներքաղաքական գործընթացների առանձնահատկությունները ճիշտ

¹ Stu' MGK'nin 7 numaralı bildirisi, ulaştırma tarihi 22.10.2010, http://www.belgenet.com/12eyul/12091980_09.html, Türkiye İçin Yayınlandiran Bildiri, ulaştırma tarihi 22.10.2010, http://www.belgenet.com/12eyul/13091980_01.html:
² Stu' MGK'nin 52 sayılı kararı, ulaştırma tarihi 22.10.2010, <http://www.belgenet.com/12eyul/mgk52.html>:
³ Stu' Milli Güvenlik Hakkında Kanun, ulaştırma tarihi 22.10.2010, <http://www.belgenet.com/12eyul/12121980.html>, Siyasi Partilerin Kapatılmasına İlişkin Yasa, ulaştırma tarihi 22.10.2010, <http://www.belgenet.com/12eyul/k2533.html>:
⁴ Stu' Danışma Meclisi, “ Milletvekili Secim Kanunu Tasarısı ve Anayasa Komisyonu Raporu”, (1/672), Sıra Sayısı 386, 1983:
⁵ Stu' Anavatan partisi programı (1983), ulaştırma tarihi 25.10.2010, <http://www.belgenet.com/parti/program/anap-1.html>, Doğru Yol partisi programı 1983, ulaştırma tarihi 25.10.2010, <http://www.belgenet.com/parti/program/dyp1983-1.html>, Demokratik Sol partisi programı (1985), ulaştırma tarihi 25.10.2010, <http://www.belgenet.com/parti/program/dsp.html>:
⁶ Stu' Milliyet gazetesi arşivi, <http://gazetearsivi.milliyet.com.tr/>:
⁷ Stu' Mumcu Uğur, Laiklik ruhuna fatiha (1 Ocak-3 Temmuz 1987 yazıları), Orhan Tülyioğlu'nun yönetmelğinde, Ankara, Şubat 2008; Mumcu Uğur, Yabancılaşma, Kenanizm, Özalizm (2 Ocak-24 Haziran 1990 yazıları), Orhan Tülyioğlu'nun yönetmelğinde, Ankara, Eylül 2008:
⁸ Stu' Birand Mehmet Ali, Yalçın Soner, The Özal, Bir Davanın Öyküsü, 11. Baskı, Doğan Kitap, 2009:

ըմբռնելուն մեծապես նպաստել են հայ արևելագետներ Վահրամ Տեր-Մաթևոսյանի⁹, Արթուր Դումանյանի¹⁰, Արտակ Շաքարյանի¹¹, Արսեն Ավագյանի¹², Սուրեն Բաղդասարյանի¹³ արժեքավոր հետազոտությունները:

Խորհրդային հեղինակների շարքում կարելի է նշել Վ. Դանիլովին, ում աշխատությունները՝ նվիրված Թուրքիայում ռազմական հեղաշրջումներին և քաղաքական գործընթացներին, էապես նպաստել են ատենախոսության մեջ բարձրացվող խնդիրների լուսաբանմանը¹⁴: Ուսալեզու հեղինակներից հարկ է առանձնացնել Մոսկվայի Պետական Համալսարանի (ՄՊՀ) Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտի Մերձավոր և Միջին Արևելքի երկրների պատմության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ. Կյաչեսլավ Շիկովի երկու ծավալուն հոդվածները, որոնցից մեկը նվիրված է Թուրքիայի քաղաքական համակարգում բանակի դերի և ազդեցության խնդրին, իսկ մյուսում ներկայացվում են 1983-2002թթ. կուսակցական համակարգի զարգացումները¹⁵:

Արևմտյան հեղինակների առավել արժեքավոր աշխատությունների շարքում կարելի է առանձնացնել Փոլ Քուբիչեքի, Ալան Մաքովսկու, Ուիլիամ Հեյլի¹⁶

⁹ Տես՝ Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001թթ.), Երևան, Լիմուշ հրատարակչություն, 2008թ.:

¹⁰ Տես՝ Դումանյան Ա., "1980թ. ռազմական հեղաշրջումը Թուրքիայում. պատճառները, ընթացքը, հետևանքները", անտիպ ատենախոսություն, Երևան, ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2007թ.:

¹¹ Տես՝ Շաքարյան Ա., Թուրքական խորհրդարանական ընտրությունների և կուսակցական համակարգի որոշ առանձնահատկությունների շուրջ. համառոտ դիտարկում, "Տարածաշրջան" No. 3(7), Երևան 2005թ.:

¹² Տես՝ Ավագյան Ա., Թուրքիայում խորքային պետության և "երգեներկոնի"-ի կապի շուրջ, Արմենարես, Մայիս 03, 2011թ., դիտվել է 01.06.2011թ., <http://armenpress.am/arm/news/651233/%D4%B9%D5%B8%D6%82%D6%80%D6%84%D5%AB%D5%A1%D5%B5%D5%B8%D6%82%D5%B4%D5%AD%D5%B8%D6%80%D6%84%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6%D5%8A%D5%A5%D5%BF%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6%D5%A5%D6%82%D4%B7%D6%80%D5%A3%D5%A5%D5%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D5%B6%D5%AB%D5%AF%D5%A1%D5%BA%D5%AB%D5%B7%D5%B8%D6%82%D6%80%D5%BB.html>:

¹³ Տես՝ Բաղդասարյան Ա., Թուրքիայի քաղաքական համակարգը 1920-1390-ական թթ., Երևան, «Չանգակ-97», 2001թ.:

¹⁴ Տես՝ Данилов В. И., Политическая борьба в Турции, 50-е начало 80-х гг. 20-ого века, Москва, Изд. "Наука", 1985г.; Данилов В. И., Турция 80-х: от военного режима до "ограниченной демократии", Изд. "Наука", Москва, 1991г.:

¹⁵ Տես՝ Шлыков В., Армия в жизни современного турецкого общества, дата просмотра 02.07.2010, http://www.perspektivy.info/oykumena/vostok/armija_v_zhizni_sovremennoy_tureckoy_obshchestva_20_09-06-01.htm; Шлыков В., Поиск политического равновесия. Эволюция партийной системы Турции в период Третьей Республики (1983-2009), дата просмотра 15.08.2010, http://www.perspektivy.info/oykumena/vostok/poisk_politicheskogo_ravnovesija_evolyucija_partijnogo_siste_my_turcii_v_period_tretjei_respubliki_1983-2009_2009-07-03.htm:

¹⁶ Տես՝ Kubicek Paul, The earthquake, Europe, and prospects for political change in Turkey, Meria Journal, volume 5, No. 2 - June 2001, accessed 23.11.2011, <http://meria.idc.ac.il/journal/2001/issue2/iv5n2a4.html#Author>; Makovsky Alan, Turkey's election and new government: An analysis, accessed 25.11.2011,

աշխատանքները: Ընտրազանգվածի փոփոխականությունը և դրա պատճառների հետազոտման համար օգտակար է եղել ճապոնացի հետազոտող Յասուչի Հազամայի ծավալուն հոդվածը¹⁷:

Մեր հետազոտության համար առանձնակի կարևորություն ունեն թուրք հեղինակների աշխատությունները, որոնք աչքի են ընկնում փաստավավերագրական նյութի հարստությամբ: Առավել արժեքավոր աշխատությունների շարքում կարելի է նշել Բյուլենթ Թանորի, Քորքուք Բորաթավի և Սինա Աքչինի¹⁸, Գյուլեր Քեմալի¹⁹, Ուլքու Իլերիի²⁰, Սաբրի Սայարիի,²¹ Ահմադ Ֆերոզի²², Էրսին Քալայցիօղլուի²³ գործերը:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ժամանակագրական առումով ատենախոսությունն ընդգրկում է 20-րդ դարի 80-ական թվականներից մինչև 2002թ. ընկած ժամանակահատվածը: Միաժամանակ խնդիրն ավելի բազմակողմանի ներկայացնելու համար նպատակահարմար է համարվել ընդհանուր գծերով ներկայացնել նաև բազմակուսակցական համակարգի անցումից մինչև 1980թ. հեղաշրջումն ընկած ժամանակահատվածի կուսակցական համակարգի զարգացումները: Ժամանակագրական սահմանների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ 1980թ. հեղաշրջումից հետո սկսվեցին դրվել կուսակցական նոր համակարգի հիմքերը, իսկ 2002թ. խորհրդարանական ընտրությունների արդյունքում կուսակցական համակարգի զարգացման գործընթացում սկսվեց նոր փուլ:

Ատենախոսության ընդհանուր մեթոդաբանությունը և եղանակները: Հետազոտության ընթացքում ձգտել ենք առավելագույնս պահպանել պատմականության սկզբունքը, քաղաքագիտական վերլուծությունը, իսկ

http://meria.idc.ac.il/journal/special/99elections.html#*Alan; Hale William, Turkey's Domestic Political Landscape: A Glance at the Past and the Future, The International Spectator, Volume XXXIV, No. 1, January - March 1999:

¹⁷ Տես՝ Hazama Yasushi, Social cleavages and electoral support in Turkey: Toward convergence? The Developing Economies, XLI-3 (September 2003):

¹⁸ Տես՝ Tanör Bülent, Boratav Korkut, Akşin Sina, Türkiye Tarihi (1980-1995), İstanbul, Cem Yayınevi, 1997:

¹⁹ Տես՝ Kemal Gözler, Türk Anayasa Hukuku, Bursa 2000:

²⁰ Տես՝ Ülkü İleri, Türkiye'de Toplumsal Değişimin Çalışma İlişkileri üzerindeki etkileri, TÜHİS, Ekim 2009:

²¹ Տես՝ Sayar Sabri, "Non-electoral sources of party system change in Turkey", Essays in Honor of Özbudun Ergun, Yazıcı, Serap and Gözler, Kemal and Keyman, Fuat (eds.), Ankara: Yetkin 2008, accessed 24.08.2010, https://research.sabanciuniv.edu/9822/2/Nonelectoral_Sources_of_Party_System_Change_%C4%B1n_Turkey.pdf:

²² Տես՝ Feroz Ahmad, The Turkish Elections of 1983, MERIP Reports, No. 122, Turkey under Military Rule (Mar. - Apr., 1984):

²³ Տես՝ Kalaycioglu Ersin, The Logic Of Contemporary Turkish Politics, Meria Journal, Volume 1, No. 3 - September 1997, accessed 12.09.2011, <http://meria.idc.ac.il/journal/1997/issue3/jv1n3a6.html#The%20author>:

եզրահանգումներն ու հետևությունները հիմնված են առաջին հերթին պատմական իրադարձությունների ու փաստերի վրա: Պատմականության սկզբունքի պահպանումը և կանխակալ դիրքորոշումների շրջանցումն ապահովել են հետազոտման և ընդհանրացման եզրահանգումների ճշտությունը:

Աշխատությունը կատարված է քաղաքական գիտությունների բնագավառում կիրառվող գիտահետազոտական արդի մեթոդներով ու սկզբունքներով: Առաջնորդվել ենք պատմաքննական, համեմատական, համադրական եղանակներով և օգտագործել նախորդ ուսումնասիրողների փորձը, նվաճումներն ու ձեռքբերումները, որոնք առկա են քաղաքագիտական և պատմագիտական աշխատություններում:

Ատենախոսության տեսական և կիրառական նշանակությունը: Սույն ատենախոսության հիմնական դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտագործվել Թուրքիայի կուսակցական համակարգի և Թուրքիայի նորագույն պատմության հիմնախնդիրներին ու առանձնահատկություններին նվիրված ուսումնասիրություններում, համալսարանական դասախոսություններում և հատուկ դասընթացներում: Աշխատության դրույթները կարող են օգտակար լինել պետական համապատասխան մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու, ինչպես նաև Թուրքիայի ներքաղաքական գործընթացները վերլուծելու և Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական մոտեցումները ճշգրտելու համար:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսության կառուցվածքը համապատասխանեցված է հետազոտության նպատակներին ու խնդիրներին: Այն ունի երեք գլուխ և ութ ենթագլուխ:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «1980թ. սեպտեմբերի 12-ի ռազմական հեղաշրջումը և դրա ազդեցությունը Թուրքիայի կուսակցական համակարգի վրա» վերտառությամբ, նվիրված է 1980թ. սեպտեմբերի 12-ին զինվորականության իրականացրած ռազմական հեղաշրջման պատճառների, հեղաշրջմանը հաջորդած «անցումային շրջանում» բարձրաստիճան զինվորականներից կազմված Ազգային Անվտանգության Կոմիտեի (Milli Güvenlik Konseyi) ձեռնարկած քայլերի նպատակների բացահայտմանը: Ըստ մեր աշխատանքային հիպոթեզի հեղաշրջումը և Ազգային Անվտանգության Կոմիտեի (ԱԱԿ) գործունեությունը լուրջ ազդեցություն

թողեցին Թուրքիայի կուսակցական համակարգի վրա: Գլուխը բաժանված է երեք ենթագլուխ:

Ազգում ուսումնասիրվել են 1946թ. բազմակուսակցական համակարգի անցումից հետո մինչև 1980թ. ռազմական հեղաշրջումը Թուրքիայի կուսակցական համակարգում տեղի ունեցած զարգացումները: 1940-ականների վերջին Թուրքիայում անցում կատարվեց միակուսակցական համակարգից բազմակուսակցական համակարգի, ինչն իր հետ լուրջ փոփոխություններ բերեց: 1950-1960թթ. ընթացքում Թուրքիայում հաստատվեց երկկուսակցական համակարգ, սակայն այն, որ 50-ականների ընթացքում «Դեմոկրատական» կուսակցությունը պարբերաբար հաղթանակ էր տանում խորհրդարանական ընտրություններում, Թուրքիան բերեց երկկուսակցական ու մի դոմինանտ կուսակցությամբ համակարգերի սահմանագիծ: Կուսակցական համակարգի բնականոն զարգացումն ընդհատվեց 1960թ. ռազմական հեղաշրջմամբ: Դրանից հետո ընդունված նոր սահմանադրության և համամասնական ընտրակարգի ընդունման արդյունքում սկսվեց Թուրքիայի կուսակցական համակարգի զարգացման նոր փուլ: 1961-1977թթ. ընթացքում կուսակցական համակարգը կարելի է բնութագրել որպես չափավոր պլուրալիզմ²⁴ ունեցող համակարգ: Դրա հետ միասին պետք է նշել, որ ծայրահեղ ծախս և ծայրահեղ աջ կուսակցությունների մուտքը խորհրդարան ավելի լայնացրեց

²⁴ Կուսակցական համակարգի դասակարգման համար ընտրվել է իտալացի քաղաքագետ Զիվկանի Սարտորիի մշակած կուսակցական համակարգերի տիպաբանությունը: "Կուսակցությունները և կուսակցական համակարգերը"(1976թ.) աշխատության մեջ Սարտորին իր տիպաբանության առանձնացում է սահմանափակ պլուրալիզմի կուսակցական համակարգ 3-5 ազդեցիկ կուսակցությամբ և ծայրահեղ պլուրալիզմի կուսակցական համակարգ վեց, յոթ կամ ութ ազդեցիկ կուսակցությամբ, որտեղ առկա է բևեռացում կուսակցությունների միջև և ձևավորվում են բարդ կոալիցիաներ: Սարտորին բազմակուսակցական համակարգերի համար կարևորեց նաև այն, թե ինչպես են կուսակցությունները հարաբերվում իրար հետ: Հենց սրանով նա ներմուծեց չափավոր և բևեռացված պլուրալիզմ հասկացությունները: Այստեղ կարևորագույն գործոնները մրցակցության բնույթն ու ուղղությունն են: Զափավոր պլուրալիզմի դեպքում մրցակցությունը նման է երկկուսակցական համակարգերի մրցակցության մեխանիզմին: Այստեղ համակարգն ունի երկու բևեռ, իսկ մրցակցությունը կենտրոնանում է՝ քաղաքական դաշտի երկու հատվածում գտնվող կուսակցությունները մրցակցում են կենտրոնում գտնվող ծայրերի համար: Այլ է իրավիճակը բևեռացված պլուրալիզմի դեպքում: Զնայած այն բանի, որ այստեղ կենտրոնը զբաղեցված է՝ համակարգի ղեկավարական ավելի շատ կենտրոնախույս է, քան կենտրոնանում: Հակահամակարգային և ծայրահեղ կուսակցությունները պայթաբում են կենտրոնի կուսակցությունների հետ՝ ձգելով կուսակցություններին և ընտրողներին դեպի իրենց հատված: Առկա է լինում երկկողմանի ընդդիմություն, որը գտնվում է երկու հակադիր հատվածներում և չի կարող միավորվել: Այսպիսի համակարգը բնութագրվում է զարգափարական մասնատվածությամբ, կենտրոնախույս ղեկավարով, անպատասխանատու ընդդիմության և պոպուլիստական քաղաքականության առկայությամբ: Stu' Wolinetz Steven B, Classifying Party Systems: Where Have All the Typologies Gone? accessed 22.07.2010, <http://www.cpsa-acsp.ca/papers-2004/Wolinetz.pdf>:

սկզբունքներին դեմ գործողությունների պարբերականորեն ծավալումը: Սահմանադրության 68/4 հոդվածում նշվում էր, որ քաղաքական կուսակցությունների կանոնադրությունները, ծրագրերը և գործողությունները չպետք է հակասեն պետության անկախության, երկրի ու ժողովրդի հետ անբաժան միասնության, մարդու իրավունքների, հավասարության ու ազգային գերիշխանության, իրավական, ժողովրդավարական ու աշխարհիկ պետության սկզբունքներին, ինչպես նաև չեն կարող պաշտպանել դասակարգային և խմբային կամ մեկ այլ տիպի բռնատիրություն կամ այն ստեղծելու նպատակ ունենալ ու չեն կարող խրախուսել հանցանք գործելուն: Բացի այդ կուսակցություններին արգելվում էր արտասահմանում ստեղծել կազմակերպություն, հիմնել երիտասարդական կամ կանանց միություններ, հիմնադրամ (հոդված 68/6), համագործակցել որևէ արհմիության, կոպերատիվի, հիմնադրամի, միության, հասարակական կազմակերպության հետ կամ դրանցից ստանալ նյութական օժանդակություն (հոդված 69/2)²⁶:

Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը ևս բազմաթիվ արգելքներ և սահմանափակումներ էր պարունակում, որոնք վերաբերում էին կուսակցությունների հետ կապված ամենատարբեր հարցերի՝ սկսած հիմնադրումից, անվանումից և անդամությունից մինչև ներկուսակցական ընտրությունների անցակցման կարգը: Ինչպես սահմանադրությունն ու Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը, այնպես էլ ընտրական օրենքը պարունակում էին արգելքներ և մեխանիզմներ, որ գործում էին փոքր կուսակցությունների դեմ, որոնցից թերևս ամենակարևորը խորհրդարանական ընտրությունների ընթացքում գործող երկրի մասշտաբով 10 տոկոսանոց ընտրաշեմն էր:

Մոդելավորելով զինվորականության տեսլականը, կարելի է ասել, որ նրանք ցանկանում էին, որ երկրում լինի ապաքաղաքականացված հասարակություն, և քաղաքական կուսակցություններից բացի ոչ մի այլ կառույց կամ կազմակերպություն չմասնակցի քաղաքականությանը: Խորհրդարանում պետք է ներկայացված լինեին 2-3 ազդեցիկ կուսակցություն, որոնց գաղափարախոսությունը կլինեին օրենքի թույլատրածի շրջանակներում: Միաժամանակ կառավարությունը, որը պետք է նախ և առաջ քննարկեր ԱԼԽ-ի «որոշումները և խորհուրդները», ունենալու էր օրենքի ուժ

ունեցող որոշումներ կայացնելու իրավունք, և այդ որոշումներն ընդունվելու էին շրջանցելով խորհրդարանական լուսմները: Եվ, ի վերջո, քաղաքական ամբողջ գործընթացն ընթանալու էր մեծ լիազորություններով օժտված նախագահի (որը լինելու էր զինվորական առնվազն մինչև 1987թ.) և պետական համակարգում մեծ կշիռ ունեցող բանակի վերահսկողության ներքո:

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ «Քաղաքականակցական համակարգի ձևավորումը 1983-1991թթ.», բաժանված է երեք ենթագլխի: Այն նվիրված է 1983թ. քաղաքացիական ղեկավարմանն անցնելու գործընթացին և 1983-1991թթ. «Մայր Հայրենիք» կուսակցության (ՄՀԿ) ձևավորած միակուսակցական կառավարությունների գործունեության ընթացքում կուսակցական համակարգի զարգացումներին: 1983թ. անցումը քաղաքացիական ղեկավարմանն ունեցավ իր առանձնահատկությունները: Այս ամբողջ գործընթացն ընթացավ ԱԼԿ-ի վերահսկողության ներքո: Քաղաքական կյանքի վերակենդանացումը և դրա ընթացքը սահմանափակված էին ԱԼԿ-ի կամայական որոշումների շրջանակներով: Քաղաքական գործունեությունը թույլ տալուց հետո բանակն արգելեց նորաստեղծ կուսակցությունների մեծ մասը: Չնայած այն բանի, որ 1970-ականների կուսակցական համակարգի հիմնական ղեկավարները կարողացան վերակազմակերպվել և ներկայանալ նոր կուսակցությունների տեսքով՝ դրանց *թույլ չտրվեց մասնակցել* 1983թ. խորհրդարանական ընտրություններին²⁷, ինչի հետևանքով ընտրությունների արդյունքները շատ հեռու էին երկրում գործող ազդեցիկ կուսակցությունների թիվը և դրանց ունեցած կշիռն արտացոլելուց: Խորհրդարանական ընտրություններին կարողացավ մասնակցել միայն երեք կուսակցություն բանակի կողմից վավերացված հիմնադիր անդամների և պատգամավորության թեկնածուների ցուցակներով: Հաղթանակ տարավ ՄՀԿ-ն, որը ընտրություններին մասնակցած 3 կուսակցությունից միակն էր, որ չէր ասոցացվում զինվորականության հետ: Կուսակցությունը կարողացավ օգուտվել դրանից, ինչպես նաև այն հանգամանքից, որ վերոնշյալ կուսակցություններին թույլ չէր տրվել պայքարել քվեների համար: ՄՀԿ-ն չէր հանդիսանում որևէ քաղաքական կուսակցության կուրսը շարունակող և կարողացել էր տարբեր հայացքներ ու գաղափարներ միավորել մի հարկի տակ, արտահայտել դրանք մի ծրագրի մեջ և

²⁶ Stü' Kemal Gözler, Türk Anayasa Hukuku, Bursa 2000, s. 101-102:

²⁷ Stü' Çavuşoğlu Hüseyin, 12 Eylül ve merkez sağ, Süleyman Demirel Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, 2007/2, sayı: 6, s. 196:

աջ կենտրոնամետ կուսակցությունների անկումը, դրա պատճառները, ինչպես նաև 1983թ. ընտրական օրենքով ներմուծված խորհրդարանական ընտրությունների ժամանակ երկրի մասշտաբով գործող 10 տոկոսանոց ընտրաշեմի քաղաքական հետևանքները:

1991-2002թթ. թուրքիան կառավարում էին թույլ կոալիցիոն և փոքրամասնության կառավարությունները: 1991-2002թթ. ընթացքում կազմավորված 8 կառավարությունների գործունեության միջին տևողությունը եղել է մեկ տարուց քիչ ավելի: Եթե համեմատենք 1990-ականներին ձևավորված քաղաքական իրավիճակը 1970-ականների հետ, ապա կտեսնենք բավական նմանություններ: Կուսակցական համակարգի մասնատվածությունը, կուսակցությունների կայուն ընտրազանգվածների բացակայությունը և պայքարը կոալիցիոն գործընկեր հանդիսող կուսակցությունների միջև և դրանց շարքերում, խոչընդոտում էին կայուն և արդյունավետ կառավարությունների ձևավորումը, ինչը թույլ չէր տալիս լուծել առկա տնտեսական խնդիրները: Արդյունքում 1994 և 2001թթ. երկրում լուրջ տնտեսական ճգնաժամ եղավ: Նորից հաճախակի էին դարձել խորհրդարանական շրջանում պատգամավորների անցումները մեկ կուսակցությունից մյուսը, պառակտումները կուսակցությունների ներսում, ինչը ևս 1970-ականներին քաղաքական կյանքում առկա լուրջ խնդիրներից էր:

Կուսակցական համակարգի մասնատվածությունը, բեռնացման մակարդակի աճը և կոռուպցիոն սկանդալները կառավարությունների անարդյունավետ գործունեության հետ միասին հանդիսացան այն հիմնական պատճառները, որոնք բերեցին այս շրջանում աջ կենտրոնամետ կուսակցությունների անկմանը: Միաժամանակ գրանցվեց ընտրազանգվածի քվեների անցում ծայրահեղ աջ կուսակցություններ, որոնք գնալով զարգացնում էին իրենց ընտրական հաջողություններ: Այն իսկապես ազդեցիկ կուսակցությունների թիվը, որոնք կարող էին կառավարություն կազմել (միանձնյա կամ կոալիցիայի տեսքով) կամ ազդել ընտրությունների արդյունքի և ծայրերի բախշման վրա 1980-ականներից մինչև 1990-ականները աճեց 4-ից մինչև 7-ը: Նման զարգացումը ցույց էր տալիս, որ ընտրազանգվածը մասնատվում է բազմաթիվ ընտրական բլոկների՝ բերելով հենց կուսակցական համակարգի մասնատմանը: Չօգնեց նաև 10 տոկոսանոց ընտրաշեմը, որը սահմանվեց խորհրդարանական ընտրությունների համար և նախատեսված էր դրդելու ընտրողներին հավաքվել երկու-երեք հիմնական

կուսակցությունների շուրջ և հետ կանգնեցնել նրանց ծայրահեղ աջ ու փոքր ծախ կուսակցությունների օգտին քվեարկելուց, ինչն առկա էր 1970-ականներին: Կենտրոնամետ աջ կուսակցությունների, ինչպես նաև ծախ կենտրոնամետ ԺՀԿ-ի անկումը և ծայրահեղ աջ իսլամամետ «Բարօրություն» կուսակցության (ԲԿ) և ազգայնական «Ազգայնական Շարժում» կուսակցության (ԱՇԿ) վերելքը կուսակցական համակարգում ցույց էին տալիս, որ վերջինիս դինամիկան ավելի շատ կենտրոնախույս էր, քան կենտրոնամետ: Հակահամակարգային դրույթներ պաշտպանող կուսակցությունների մուտքը կուսակցական համակարգ, կառավարության մաս կազմող կուսակցությունների վարած պոպուլիստական տնտեսական քաղաքականությունը, ինչպես նաև, գաղափարական բեռնացման բարձր մակարդակը թույլ են տալիս գալ այն եզրահանգմանը, որ 1991թ. խորհրդարանական ընտրություններից հետո թուրքիայի կուսակցական համակարգը չափավոր պլուրալիզմից սկսեց շարժվել դեպի բեռնացված պլուրալիզմ և արդեն սկսած 1995թ.-ից մինչև 2002թ. ընդհանուր առմամբ հանդիսանում էր այդպիսին: Սրա հետ միասին կար մի առանձնահատկություն, որը հակասում էր Սարտորիի տված բեռնացված պլուրալիզմին բնորոշ հատկանիշներին: Դա ծայրահեղ կուսակցությունների ներառումն էր կոալիցիոն կառավարությունների կազմ, ինչը տեղի ունեցավ ԲԿ-ՃՈՒԿ, «Ժողովրդավարական ծախ» կուսակցություն-ԱՇԿ-ԱՀԿ կառավարությունների օրոք: Միաժամանակ կուսակցական համակարգում տեղի ունեցող զարգացումների վրա շարունակում էին լուրջ ազդեցություն ունենալ ՁՈՒ-ն և դատական իշխանությունները: 1990-ականներին թուրքիայում բանակի ազդեցության ուժեղացումը քաղաքական դաշտում արտահայտվեց Ազգային անվտանգության խորհրդի միջոցով, որն իրեն վերագրել էր կենտրոնական դեր քաղաքական կարևոր ուղղությունների ձևավորման և, հատկապես, քաղաքական իսլամի ու քրդական ազգայնականության վտանգների հետ կապված հարցերում: Ինչպես և նախորդ շրջաններում, կուսակցական համակարգի զարգացման այս շրջանում ևս ոչ ընտրական գործոնները լուրջ ազդեցություն ունեցան կուսակցական համակարգի վրա: ՁՈՒ-ի ճնշման ներքո ԲԿ-ի հեռացումը իշխանությունից, Սահմանադրական դատարանի կողմից ԲԿ-ի, նրա հետնորդ «Առաքինություն» կուսակցության ու մի շարք քրդամետ և այլ կուսակցությունների արգելումը, ինչպես նաև խորհրդարանական ընտրությունների ժամանակ գործող երկրի մասշտաբով 10 տոկոսանոց ընտրաշեմն այդ ազդեցության ապացույցն են: 1991-2002թթ.

կուսակցական համակարգի հիմնական դերակատարների անկարողությունն արդյունավետ համագործակցել և լուծել այդ խնդիրները բերեց նրան, որ 2002թ. խորհրդարանական ընտրություններում նրանցից շատերը գրանցեցին չափազանց ցածր արդյունքներ: Երկու նորաստեղծ կուսակցություն միասին հավաքեց ծայրերի 40 տոկոսից ավելին, և դրանցից մեկը՝ «Լիդարություն և զարգացում» կուսակցությունը (ԱԶԿ) գրավեց առաջին տեղը՝ կազմելով միակուսակցական կառավարություն: ԱԶԿ-ի որդեգրած գաղափարական չափավորությունը, ինչպես նաև ՄՀԿ-ի և ՃՈԿ-ի մի շարք նախկին անդամների անցումն այդ կուսակցություն, նպաստեցին այն բանին, որ կենտրոնամետ կուսակցություններին աջակցող շատ ընտրողներ իրենց ծայրը տան ԱԶԿ-ին: Միաժամանակ ԱԶԿ-ի իսլամամետ լինելը նույնպես նպաստեց ընտրազանգված մոբիլիզացնելու գործին: Իսլամական գործոնը ամենակարևորն էր 2002թ. ընտրազանգվածի կողմնորոշման հարցում: Կուսակցության առավելություններից էր նաև դրա նորաստեղծ լինելը: ԱԶԿ-ն այդ ժամանակ դեռ զերծ էր կոռուպցիոն կամ այլ վարկաբեկող դեպքերից³⁰: Այս ընտրությունները հանգեցրին երկկուսակցական խորհրդարանի ու միակուսակցական մեծամասնական կառավարության ձևավորման և ազդարարեցին կուսակցական համակարգի զարգացման մի նոր փուլ:

³⁰ Stu' Sayari Sabri, Towards a New Turkish Party System? accessed 15.08.2010, http://research.sabanciuniv.edu/6508/1/savari_TS_Article.doc, p. 9:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1980-90-ական թվականներին Թուրքիայի կուսակցական համակց կերպավորման գործընթացի քաղաքագիտական վերլուծությունը հնարավորություն տվեց կատարել հետևյալ եզրահանգումները.

1. 1961-1977թթ. Թուրքիայի կուսակցական համակց համապատասխանում էր չափավոր պլյուրալիզմի բնորոշչներին, սալ այն սկսել էր շարժվել դեպի բևեռացված պլյուրալիզմ: Ծայրս գաղափարախոսությունների տարածումը, քաղաքական ահաբեկչույ աճը, հիմնական կուսակցությունների միջև համագործակցույ բացակայությունը և բևեռացման բարձր մակարդակը երկրում առաջա լուրջ քաղաքական ճգնաժամի հիմնական պատճառներն էին, իսկ ա տնտեսական լուրջ խնդիրները չէին գտնում իրենց լուծումները կս մեծամասնության վրա չհիմնված թույլ կառավարությունների պատճա Ստեղծված իրավիճակը դրդեց Ձինված ուժերին Թուրքիայի պատճու մեջ երրորդ անգամ միջամտել քաղաքական կյանքի զարգացումներին:
2. Ձինվորականության հիմնական նպատակներից էր ստեղծել քաղաքական համակարգ, որի դեպքում կբացառվեր 1970-ական վերջին առկա իրավիճակը: Իշխանությունը քաղաքացիական անձ հանձնելուց առաջ ընդունված բազմաթիվ օրենքները, մշակված սահմանադրությունը, քաղաքական կուսակցությունների մասիճ ընտրական օրենքները նախագծված էին ապահու զինվորականության տեւականը քաղաքական համակարգի մս Դրանցում առկա բազմաթիվ դրույթները միտված էին դալ կուսակցություններն ավելի վերահսկելի, կանխել և կուսակցությունների մուտքը խորհրդարան, բարձրացնել Ե իշխանության կենտրոնացումը և ուժեղացնել դրա գործադիր թևը, ին նաև մեծացնել զինվորականության ազդեցությունը Ե իշխանությունների վրա:
3. Անցումը քաղաքացիական կառավարման ընթացավ զինվորականո խիստ վերահսկողության ներքո, որպեսզի բացառվեին նախկին ու վերադարձը և այլ անցանկալի զարգացումներ, ինչն արտաց

նորաստեղծ կուսակցություններից շատերին արգելելու և ընտրություններին մասնակցելու իրավունքից զրկելու տեսքով:

4. Արիեստական մթնոորդտում անցկացված 1983թ. խորհրդարանական ընտրություններում, ի հեճուկս գինվորականության սպասումների, հաղթեց ՄՀԿ-ն և կազմեց միակուսակցական կառավարություն, քանզի, նախ և առաջ, ՄՀԿ-ն միակ կուսակցությունն էր, որ չէր ասոցացվում ընտրազանգվածի մոտ գինվորականության հետ: Կուսակցությունը կարողացել էր նաև իր շուրջը հավաքել տարբեր գաղափարախոսություններ ունեցող մարդկանց և կազմակերպել լավ քարոզարշավ, որտեղ շեշտը դրվել էր տնտեսական խնդիրների վրա: Չնայած այն բանի, որ լուծարված «Արդարություն» կուսակցությունը և ԺՀԿ-ն վերակազմակերպվել էին նոր կուսակցությունների տեսքով, վերջիններիս թույլ չտրվեց մասնակցել ընտրություններին, ինչը նույնպես գործեց ՄՀԿ-ի օգտին:

5. 1987թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում քաղաքական գործիչների նկատմամբ արգելքների վերացումից հետո անցկացված խորհրդարանական ընտրություններում ՄՀԿ-ի տարած հաղթանակի հիմնական գործոններից էին ընտրությունների վաղաժամ անցկացումը և ընտրական օրենքում կատարված ՄՀԿ-ին ձեռնտու փոփոխությունները:

6. 1983-1991թթ. Թուրքիայում ձևավորված կուսակցական համակարգը հանդիսանում էր չափավոր պլուրալիզմով համակարգ, որն ուներ 4 ազդեցիկ կենտրոնամետ կուսակցություն:

7. 1990-ականներին ձևավորվող թույլ կոալիցիոն կառավարությունների անկարողությունը լուծել տնտեսական խնդիրները կուսակցական համակարգի մասնատվածության, բևեռացման համեմատաբար բարձր մակարդակի և կոռուպցիոն սկանդալների հետ հանդիսացավ 1991-2002թթ. աջ կենտրոնամետ կուսակցությունների անկման պատճառներից մեկը:

8. Աջ կենտրոնամետ կուսակցությունների անկումը և մշակութային ու գաղափարական տարբերությունների աճը հասարակության շրջանում մղեց ընտրազանգվածը դեպի ժայրահեղ աջ հատված, ինչի արտացոլումը եղան ԲԿ-ի և ԱՇԿ-ի ընտրական հաջողությունները:

9. Ինչպես և նախորդ շրջաններում 1991-2002թթ. ոչ ընտրական գործոնների ազդեցությունը կուսակցական համակարգի զարգացումների վրա եղավ զգալի: ԶՈՒ-ի ճնշման ներքո ԲԿ-ի հեռացումը իշխանությունից, Սահմանադրական դատարանի կողմից ԲԿ-ի, նրա հետնորդ «Առաքինություն» կուսակցության ու մի շարք քրդամետ և այլ կուսակցությունների արգելումը, ինչպես նաև խորհրդարանական ընտրությունների ժամանակ գործող երկրի մասշտաբով 10 տոկոսանոց ընտրաչեմը հանդիսացան այդ ազդեցության վառ օրինակներ:

10. Թուրքիայի կուսակցական համակարգը 1991թ. սկսեց չափավոր պլուրալիզմից շարժվել դեպի բևեռացված պլուրալիզմ և 1995-2002թթ. հիմնականում համընկնում էր բևեռացված պլուրալիզմի բոլոր հատկանիշներին:

11. Կառավարությունների անարդյունավետ գործողությունները, կոռուպցիոն սկանդալները և 2001թ. լուրջ տնտեսական ճգնաժամը պատճառ հանդիսացան, որ 2002թ. նոյեմբերին անցկացված խորհրդարանական ընտրությունների արդյունքում 1991-2002թթ. կուսակցական համակարգի հիմնական դերակատարներից շատերը դուրս մնացին ընտրական և խորհրդարանական քաղաքականությունից: Սա ճանապարհի հարթեց նորաստեղծ ԱԶԿ-ի համար, որը գրավեց առաջին տեղը՝ կազմելով միակուսակցական կառավարություն: Դրանով իսկ ավարտվեց 1991-2002թթ. կոալիցիոն կառավարությունների շրջանը և կուսակցական համակարգում սկսվեց զարգացման մի նոր փուլ:

Ատենախոսության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և պաշտպանության է երաշխավորվել Երևանի Պետական համալսարանի Քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոնի կողմից: Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ գիտական աշխատություններում.

1. Աջ կենտրոնամետ կուսակցությունների անկումը Թուրքիայի կուսակցական համակարգում (1991-2002), ՀՀ Պետական կառավարման ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդես, Երևան, 2012, 1-2, էջ 188-193:

Вторая глава – «Становление многопартийной системы в 1983-1991гг.», имеет три подглавы и посвящена переходу в 1983г. к управлению гражданскими властями и процессам в партийной системе Турции в период правления однопартийных правительств Партии Отечества.

Третья глава тезиса состоит из двух подглав и посвящена следующему: «Преобразование партийной системы в 1991-2002гг.». Здесь предметом политического исследования являются появление в партийной системе довольно влиятельных партий с антисистемными положениями, причины упадка правоцентристских партий в партийной системе Турции и политические последствия десятипроцентного избирательного барьера действующего во время парламентских выборов.

Содержание диссертации можно представить в следующих положениях:

- Одна из основных целей военных было предотвращение повторения политической обстановки конца 70-ых годов. Принятые после переворота конституция 1982 года, законы о политических партиях и выборах были нацелены на обеспечение видения военных о политической системе. Многие статьи этих законов предполагали сделать партии более контролируемыми, предотвратить присутствие малых партий в парламенте, повысить уровень централизации власти и усилить ее исполнительную ветвь, а также усилить влияние военных на гражданские власти страны.

Содержание диссертации можно представить в следующих положениях:

- Переход в 1983г. к управлению гражданскими властями проходил под строгим контролем военных, в результате чего многие новые партии были запрещены и к парламентским выборам 1983г. были допущены только три партии. Основным залогом победы Партии Отечества на этих выборах было то, что она не ассоциировалась с военными властями. Партия Отечества смогла объединить вокруг себя людей с разными идеологиями и провести хорошую предвыборную кампанию, где основной акцент был сделан на экономические вопросы. Несмотря на то, что закрытые властями Партия Справедливости и Народно-республиканская Партия реорганизовались в виде других партий, им не было позволено участвовать на выборах, что тоже сыграло на руку Партии Отечества.

- Основными факторами победы Партии Отечества на парламентских выборах 1987г. были: проведение выборов раньше намеченного времени и изменения в избирательном законе, обеспечившие преимущества для Партии Отечества.

- Неспособность слабых коалиционных правительств, сформированных в 90-ые годы, решать экономические проблемы, раздробленность партийной системы, высокая степень поляризации и коррупционные скандалы явились причинами упадка правоцентристских партий в партийной системе Турции в 1991-2002гг.

- Как и прежде, в 1991-2002гг., вневыборные факторы имели серьезное влияние на ход развития партийной системы. Отставка правительства Партии благоденствия под нажимом военных, закрытие Партии благоденствия и ее преемницы Партии добродетели, нескольких прокурдских и ряда других партий Конституционным Судом, а также десятипроцентный избирательный барьер действующий во время парламентских выборов были свидетельствами этого влияния.

- В 1983-1991гг. партийная система Турции была системой ограниченного плюрализма, однако с 1991г. она начала смещение в сторону поляризованного плюрализма и уже в 1995-2002гг. соответствовала почти всем его признакам.

- В результате непродуктивных действий, коррупционных скандалов и серьезного экономического кризиса 2001 года многие из основных акторов партийной системы 1991-2002 гг. потерпели поражение в парламентских выборах ноября 2002 года и были вытеснены из выборной и парламентской политики. Этим был открыт путь для Партии справедливости и развития, основанной незадолго до выборов, которая победила на выборах и сформировала однопартийное правительство. Таким образом, этап коалиционного правительства 1991-2002 подошел к концу и началась новая эра развития в партийной системе.

Karen Shakaryan

The Transformation of Turkish Party System in 1980-90s

Dissertation under 23.00.02 cipher- "political institutions and processes"

(Political sciences) aspiring to earn a PhD in Political Sciences.

The public defense of the dissertation will take place on June 29, 2012 at 14:00 in the National Strategic Research Institute under the MOD of RA at the 056 HAC Specialized Chamber session (Address: K. Ulnetsi str. 56/6, Yerevan 0037, Armenia)

Resume

The purpose of the study is the analysis of the transformation of Turkish party system in 1980-90s. Chronological framework covers from 1980 to 2002. The structure of the work serves the purposes and the basic tasks of the study and consists of introduction, three chapters, conclusion and the list of works. In the introduction the stress is made on actuality of the study, the basic aims and the objects of the study, historical bounds, methodology, and a short review of the list of scientific literature and sources, also there are presented the theoretical and applied meanings of the thesis.

The politics of military after military coup of 1980, the constitution, political parties and electoral laws adopted after military coup, the process of decline of center-right parties in the Turkish party system in 1991-2002 period and the impact of non-electoral factors on party system in the period of the study have been investigated in order to make observations and to provide full value for their application.

The first chapter of the thesis, called "The military coup of 1980 and its impact on the Turkish party system", is devoted to the reasons of the coup and the purposes of the National Security Council's actions. According to the hypothesis of our work, one of the main purposes of the National Security Council was to prevent the recurrence of political situation of the late 1970s. The first chapter ends with a study of the constitution, political parties and electoral laws adopted after military coup.

The second chapter - "The formation of a multiparty system in the period of 1983-1991" has three sub-chapters devoted to the transition to civic rule in 1983 and the processes that took place in the period of single party governments run by Motherland party.

The third chapter of the thesis consists of two sub-chapters. It is devoted to the appearance of quite influential parties with anti-systemic provisions, decline of center-right parties in the Turkish party system, and political consequences of the 10 percent electoral threshold.

The findings of the study can be presented in the following:

- One of the main purposes of the National Security Council was to prevent the recurrence of political situation of the late 1970s. The new constitution, political parties and electoral laws, adopted after military coup, were designed to support the military's vision of political system. That laws included many provisions which were intended to make parties more controllable, prevent the presence of small parties in parliament, increase the level of centralization of power and strengthen its executive branch as well as enhance the impact of military on the civilian authorities.
- The transition to civic rule in 1983 passed under strict control of military and, as a result, a lot of newly created parties were banned and only three parties were allowed to participate in the 1983 parliamentary elections. The Motherland party won the elections mainly because it was the only party out of the rest not associated with the military rule. This party succeeded to unite people with different ideologies and organize good campaign the top theme of which were the economic issues. Banned the Justice and Republican People parties reorganized themselves into new parties, but they were not allowed to participate in the elections. That also benefited the Motherland party.
- The main reasons of the Motherland party's victory in 1987 elections were holding of elections before the scheduled time and changes in electoral law, which provided benefits for it.

05.02.2013

- The inability of weak coalition governments, formed in the 90s, to solve economic problems, the fragmentation of the party system, high level of polarization and corruption cases resulted in the decline of center-right parties in the Turkish party system in the period of 1991-2002.
- As in the past, in 1991-2002 non electoral factors had serious impact on party system developments. The resignation of the Welfare party's government under the pressure of military, the closure of the Welfare party, its successor the Virtue party, several pro-Kurdish and other parties by Constitutional court and 10 percent electoral threshold were the examples of that impact.
- In 1983-1991 the Turkish party system was the system of limited pluralism, but since 1991 it started to shift toward polarized pluralism and in 1995-2002 it had almost all of the features of polarized pluralism party system.
- As a result of non-productive actions, corruption scandals and the serious economic crisis of 2001, many major actors of 1991-2002 party system were defeated in November 2002 parliamentary elections and found themselves out of the election and parliamentary politics. This paved way for newly-found AK party that took the prize and formed single-party government. Thus the coalition government phase of 1991-2002 came to its end a new development era began in the party system.



ՀՀ Ազգային գրադարան



NL0516414

